ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԳՈՐԻՍԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ
ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ
ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ Ուսուցման փոխներգործուն մեթոդների կիրառության ձևերը տարրական դասարանների դասագործընթացում

ԱՌԱՐԿԱ ԴԱՍՎԱՐ (ՄԱՅՐԵՆԻ, ՄԱԹԵՄԱՏԻԿԱ)

ՀԵՂԻՆԱԿ Խաչատրյան Շուշանիկ Զավենի

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ Գորիսի թիվ 2 հիմնական դպրոց

Աշխատանքը թույլատրված է պաշտպանության

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՏ. ՂԵԿԱՎԱՐ՝ Ն. Ռ. Բաղդասարյան, ԳՊՀ դասախոս

ԳՈՐԻՍ 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Ներածություն 3
2. Հասկացություն ուսուցման փոխներգործուն մեթոդների մասին 4
3. Փոխներգործուն մեթոդների կիրառումը տարրական դասարաններում 13
4. Փոխներգործուն մեթոդների կիրառման մեր փորձը 15
5. Եզրակացություններ 17
6. Օգտագործված գրականություն 18

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ինչպես գիտենք, մանկավարժական պրակտիկայում ընդունված է հասկանալ, որ մեթոդը ուսումնադաստիարակչական նպատակներին հասնելու ձև է: Ներկայիս մեթոդական բազմաթիվ նորարարություններ կապված են փոխներգործուն մեթոդների կիրառման հետ, ինչը վկայում է արդյունավետ, հետաքրքիր, հասանելի, ուսանելի և դյուրին ուսուցում կազմակերպելուն : Քանի որ կրտսեր դպրոցականներն ունեն անկայուն ուշադրություն, բարձր շարժողական ակտիվություն, խաղային գործունեության ձգտում, հետաքրքրությունների բազմազանություն , ուստի պետք է այնպես կազմակերպել ուսուցումը, որ ոչ մի աշակերտ դուրս չմնա այդ գործընթացից:

Փոխներգործուն մեթոդներով իրականացվող ուսուցման առավելությունն կայանում է նրանում, որ դասապրոցեսին մասնակից են դառնում բոլոր աշակերտները, ուսուցչի կողմից նրանց պատրաստի գիտելիքներ չեն տրամադրվում, ինչը հնարավորություն է տալիս ձեռք բերելու նոր գիտելիքներ, կարողություններ և հմտություններ :

Այս հետազոտության **արդիականությունը** պայմանավորված է փոխներգործուն մեթոդների կիրառմամբ արդյունավետ ուսուցում կազմակերպելուն:

Ուսումնասիրության **նպատակն է** պարզել փոխներգործուն մեթոդների արդյունավետությունը տարրական դպրոցում:

Հետազոտության **խնդիրն է** .

1. Ուսումնասիրել թեմայի վերաբերյալ գրականությունը:
2. Ուսումնասիրել փոխներգործուն մեթոդների կիրառման պայմանները դպրոցում:
3. Գործնական եղանակով ստուգել մեթոդների կիրառությունը տարրական դպրոցում:
4. Ուսումնասիրել փոխներգործուն մեթոդների կիրառությունը տարրական դպրոցում:

1. ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՓՈԽՆԵՐԳՈՐԾՈՒՆ (ԻՆՏԵՐԱԿՏԻՎ) ՄԵԹՈԴՆԵՐԻ ՄԱՍԻՆ

<<Ուսուցման մեթոդը>> բարդ և բազմակողմանի հասկացություն է: Մեթոդը հունարեն բառ է (metodos), որ բառացի թարգմանած նշանակում է ինչ-որ տեղ տանող ուղի, ճանապարհ: Գիտական գրականության մեջ մեթոդն ունի բազմաթիվ սահմանումներ. <<Ուսուցման մեթոդը ուսուցման այնպիսի ձև է, որը կիրառվում է պարբերաբար և մեծ ազդեցություն թողնում մանկավարժական աշխատանքի ամբողջական ուղղվածության վրա>>: <<Ուսուցման մեթոդը ուսուցչի և աշակերտի հետևողական, փոխկապակցված գործողությունների համակարգն է, որն ապահովում է կրթության բովանդակության յուրացումը>>: Մեթոդների ընտրությունը և կիրառությունը ինքնանպատակ լինել չի կարող: Այն կապված է բազմաթիվ խնդիրների և նպատակների հետ, որոնք իրական լուծում կարող են ստանալ միայն հատուկ պլանավորված և կազմակերպված ուսումնական գործընթացի միջոցով: Դա պայմանավորված է ուսուցման գործընթացի բարդությամբ:

Ուսուցման գործընթացի կազմակերպումը պետք է իր մեջ ներառի ուսուցման բազմազան մեթոդներ:

Ակտիվ ուսուցումը ենթադրում է այնպիսի մեթոդների համակարգի կիրառում, որը ոչ թե նախատեսում է ուսուցչի կողմից պատրաստի գիտելիքի մատուցում, մտապահում և վերարտադրություն, այլ ուսուցման ակտիվ ճանաչողական և պրակտիկ գործունեության ընթացքում գիտելիքների և հմտությունների ինքնուրույն ձեռքբերում: Ակտիվ ուսուցման մեթոդներն այսօր երկու խումբ են կազմում՝ ***ավանդական*** և *նոր* կամ ***ժամանակակից*** *մեթոդներ*:

Ավանդական են համարվում բացատրական, զննական այն մեթոդները, որոնց հիմքում ընկած է պատրաստի տեղեկատվության պարզ փոխանցումը սովորողին և վերջինիս կողմից դրա պարզ վերարտադրումը:

Ժամանակակից մեթոդների հիմքում ընկած է սովորողի ինքնուրույն ուսումնական գործունեությունը, գիտելիքի ձեռքբերման գործընթացում նրա անմիջական, ակտիվ

մասնակցությունը: Ուսուցման ընթացքում ակտիվ միջավայր ապահովող մեթոդներն ընդունված է անվանել ինտերակտիվ կամ փոխներգործության մեթոդներ:[1]

Ժամանակակից կրթական շատ մեթոդական նորամուծություններ կապված են ուսուցման ինտերակտիվ մեթոդների կիրառման հետ: Ինտերակտիվ բառը անգլերեն «interactive» բառից է, որտեղ «inter» նշանակում է փոխադարձ, «act» – գործողություն: Ինտերակտիվ նշանակում է փոխադարձ գործողության ունակություն, կամ ինչ-որ մեկի, օրինակ՝ մարդու կամ ինչ-որ բանի, օրինակ՝ համակարգչի հետ զրույցի, երկխոսության գործընթաց: Հետևաբար, ինտերակտիվ ուսուցումը դա, ամենից առաջ, ուսուցում է երկխոսության ձևով, որի ընթացքում իրականացվում է փոխադարձ գործողություն ուսուցանողի և ուսումնառողի միջև:

Ինտերակտիվ ուսուցումը ճանաչողական գործունեության կազմակերպման յուրահատուկ ձև է: Այն ունի լիովին որոշակի և կանխատեսելի նպատակներ: Այդ նպատակներից մեկը ուսուցման այնպիսի նպաստավոր պայմանների ստեղծումն է, որոնց դեպքում ուսումնառողը զգում է իր հաջողակությունը, ինտելեկտուալ կարողունակությունների աճը, որն էլ նպաստում է ուսուցման գործընթացի արդյունավետությանը:

Ուսուցման ինտերակտիվ մոդելի կիրառումը նախատեսում է իրական իրավիճակների մոդելավորում դերային, գործարար խաղերի օգտագործում, ծագած խնդիրների լուծման վերաբերյալ համատեղ որոշման կայացում, ուսուցման գործընթացում որևէ գաղափարի կամ մասնակցի գերիշխանության բացառում: Ներգործության օբյեկտից ուսումնառողը վերածվում է փոխազդեցության սուբյեկտի, ակտիվ մասնակցություն ցուցաբերելով ուսուցման գործընթացում՝ առաջնորդվում իր անհատական աշխատանքային պլանով:

Ուսուցման ավանդական մոդելի կիրառման ժամանակ ուսումնառողները յուրացնելով արդեն պատրաստի գիտելիքների մեծ ծավալներ, այնուհանդերձ, զրկված են մյուս ուսումնառողների հետ գործունեության պայմաններում համատեղ նախագծերի մշակման հնարավորությունից: Իսկ ինտերակտիվ ուսուցման ժամանակ գերակշռում են

[1] Խաչատրյան Ս. Գ., Ուսուցման ժամանակակից մեթոդների կիրառումը , Գյումրի, 2006

այն մեթոդները, որոնք հիմնված են ուսուցման գործընթացի սուբյեկտների փոխներգործության վրա:

Այդ մեթոդների որոշիչ դերը կայանում է նրանում, որ ուսուցման մեթոդները ինքնին ոչ միայն ուսուցանողի և ուսումնառողի համատեղ գործունեություն են, այլ նաև դրան նախորդող դիդակտիկական նպատակներին հասնելու համար ուսուցանողի կողմից ճանաչողական ակտիվության նախօրոք որոշակիացված խնդիրների, մակարդակների, ուսումնական գործողությունների և ակնկալվող արդյունքների հետ ուսումնառողի ուսումնա-ճանաչողական գործունեություն կազմակերպելու միջոցներ:

Ինտերակտիվ ուսուցման էությունը աշակերտների և ուսումնառողների ճանաչողական կարողությունների և նկրտումների կենտրոնացման, ճանաչողական գործընթացի նկատմամբ ինքնուրույն հետաքրքրություն արթնացնելու, գործնական սեփական շահեր ձևավորելու, ստեղծագործական գործընթացում կենտրոնանալու և ստեղծագործելուց հաճույք ստանալու ունակության զարգացումն է:

Ուսուցման ինտերակտիվ մեթոդները թույլ են տալիս ուսումնառողի համար անընդհատ նորացվող դաստիարակչական և ուսումնական համախումբ իրադրությունների այնպիսի պայմաններ ստեղծել, որտեղ իրականացվում է նրա անձի ամբողջական ներգրավվումը գործունեության և փոխադարձ շփման գործընթացին, որը ակտիվացնում է նրա ներքին ձգտումներն ու կարողությունները՝ նպաստելով ներքին հասունացմանը:

Դասավանդողը ուսուցման գործընթացի մասնակիցներին նոր գիտելիքներ հաղորդելու հետ մեկտեղ նրանց առաջնորդում է դեպի ինքնուրույն որոնման գործընթաց: Դասավանդողի ակտիվությունը իր տեղը զիջում է ուսումնառողների ակտիվությանը՝ նպատակ ունենալով ստեղծել պայմաններ նրանց սեփական նախաձեռնության համար:

Հատկապես, հարկ է նշել, որ ուսուցման ինտերակտիվ մեթոդները թույլ են տալիս կարգավորել անհատի կամային որակները, որը, ինչպես համարում են ինքնադաստիարակման բոլոր հետազոտողները, առավել նշանակալից են տվյալ գործընթացի համար: Մի կողմից ինքնաճանաչողությունը, ինքնագնահատումը,

ինքնաքննադատությունը ոչ այնքան ուսումնառողի սեփական կամային հատկությունների լարման արդյունք են, որքան ուսումնական խմբում ձևավորված ինտերակտիվ փոխազդեցության հետևանք: Մյուս կողմից, ուսումնառողի կամային հատկությունների ոչ բավարար զարգացումը լրացվում է խմբային աշխատանքում նրա ինքնահաստատման պահանջմունքով և ինտերակտիվ ուսուցման իրադարձությունների շարքի փոփոխվող պայմաններին հարմարվելու ձգտումով:[2]

Վերը նշված պատճառներով է պայմանավորված ուսումնառողների առավել մեծ հետաքրքրությունը դաստիարակության և ուսուցման գործընթացում ինտերակտիվ մեթոդների կիրառության նկատմամբ՝ որպես անհատի գործողությունների դրդապատճառների պարզաբանման, ինքնազարգացման աղբյուրի, անհատի էներգիայի և նպատակասլացության ակտիվացման միջոցների:

Ուսումնական գործընթացի հաջող իրականացման համար ուսուցչին անհրաժեշտ է տարբեր մեթոդների իմացություն: Սակայն սոսկ իմացությունը բավարար չէ արդյունավետ ուսուցում իրականացնելու համար: Այստեղ չափազանց կարևորվում է ուսուցման նպատակներից ու կանխատեսված արդյունքներից բխող մեթոդների ճիշտ ընտրության և կիրառության կարողություն: Մեթոդների ընտրությունը և կիրառությունը ինքնանպատակ լինել չի կարող: Այն կապված է բազմաթիվ խնդիրների և նպատակների հետ: Ուսուցման գործընթացի կազմակերպումը պետք է իր մեջ ներառի ուսուցման բազմազան մեթոդներ:

Սակայն մեթոդները պետք է կիրառվեն ուսուցման գործընթացի այն հատվածում, երբ անհրաժեշտ է զարգացնել աշակերտի մտածողությունը և ճանաչողական ակտիվությունը: Բայց կարևոր է նշել, որ ակտիվ մեթոդների մեծամասնությունը բազմագործառութային նշանակություն ունեն ուսուցման գործընթացում:

Մեթոդներ, որոնք հարմար են կիրառել դասի խթման փուլում՝ մտագրոհ, խմբավորում, պրիզմա, մտածիր-զույգ կազմիր-քննարկիր, ձնակույտ և այլն:

Մեթոդներ, որոնք հարմար են կիրառելու դասի իմաստի ընկալման փուլում՝ T-աձև աղյուսակ, գաղափարների քարտեզ, վենի դիագրամ, տեքստի նշագրման համակարգի մեթոդ, բանավեճ, զրույց, համառոտ դասախոսություն,

[2] Ամիրջանյան Յու. Ա. Սահակյան Ս.Մ՝Մանկավարժություն, Երևան, 2004. -455 էջ

խորանարդում, խճանկար, երեք բանալի և մեկ կողպեք և այլն:

Մեթոդներ, որոնք հարմար են կիրառել դասի կշռադատման փուլում՝ քառաբաժան, խորանարդում և այլն:

Մտագրոհ կամ մտքերի տարափ: : Այս մեթոդի հիմնական նպատակը աշակերտների ուշադրությունը տվյալ նյութի վրա կենտրոնացնելն է, նոր գաղափարներ հայտնաբերելը:

Մինչ դասանյութին անցնելը՝ ուսուցիչը որոշակի ժամանակում կազմել է տալիս երեխաների իմացած տեղեկատվությունը նոր հաղորդվելիք թեմայի վերաբերյալ: Ապա բոլոր մտքերը գրի է առնվում գրատախտակին: Այս մեթոդի սկզբունքային առանձնահատկությունն այն է, որ յուրաքանչյուր մասնակից ազատ և անկաշկանդ արտահայտում է իր իմացածը, չի անհանգստանում սխալվելուց և հակասական գաղափարներ արտահայտելու մտավախություն չի ունենում: Այսպիսի անկաշկանդ մթնոլորտի ստեղծումը նպաստում է ստեղծագործական մտածողության զարգացմանը: Մտքերը գրատախտակին գրի առնելուց հետո, ընթերցում են նոր նյութը, ապա ամբողջ դասարանով քննարկում են առաջադրված գաղափարները, անհրաժեշտության դեպքում լրացնում, եղած անհամաձայնությունները քննարկում, ուղղում:

Բանալի եզրույթների մեթոդ: Ուսուցիչը կարող է տեքստից ընտրել 4-5 բանալի բառեր և դրանք գրել գրատախտակին: Զույգերին տրվում է 5 րոպե, որպեսզի ուղեղային գրոհի միջոցով տան այդ բառ-եզրույթների ընդհանուր մեկնաբանությունը և ենթադրեն, թե դրանք ինչպես կկիրառվեն պատմաժամանակագրական կամ բնագիտական տեքստում: Երբ սովորողները գալիս են մեկ ընդհանուր եզրակացության և գտնում իրենց <<բանալի>> բառերը, ուսուցիրը խնդրում է այդ բառերին ուշադրություն դարձնել նոր նյութի ուսուցման ժամանակ, որպեսզի ստուգեն՝ ճիշտ իմաստով են կիրառվել, թե ոչ:

Պրիզմա: Այս մեթոդը խրախուսում է սովորողներին ակտիվ ու համարձակ մտածել որևէ թեմայի շուրջ: Պրիզմայի հիմնական նպատակը ներկայացվող երևույթի, հասկացության, գաղափարի վերաբերյալ ենթագիտակցական ոլորտում եղած ասոցիատիվ կապերի վերհանումն ու արձանագրումն է, այսինքն՝ կապ է հաստատվում սովորողների ունեցած գիտելիքների և ուսուցանվող նոր նյութի միջև: Այն գծագրական դասակարգչի ձև ունի և մտածողության ընթացքը դարձնում է ավելի ակնառու ու պատկերավոր: Այն կարելի է կազմել անհատապես, բայց առավել արդյունավետ են խմբային աշխատանքի արդյունքները:

Զնակույտի մեթոդ: Այս մեթոդի նպատակը մասնակիցների կարծիքների փոխանակումն է, ընտրությունը և խմբի գաղափարների կազմումը: Աշխատանքը կարելի է կազմել 2-4 հոգանոց խմբերով: Ուսուցիչն աշակերտներին ներկայացնում է որևէ պատմություն կամ առաջադրանք: Աշակերտները պետք է գրեն իրենց մտքում ծագած մտքերն ու գաղափարները տվյալ պատմության վերաբերյալ: Ապա պետք է կազմեն զույգեր և իրար ներկայացնեն անձնական կարծիքները: Դրանից հետո պետք է երկուսի համար ձևակերպեն ընդհանուր 3-5 կարծիք, որոնք վերցված կլինեն անհատական կարծիքների ցանկից: Խմբի անդամները միավորվելով՝ 4 հոգանոցներից ձևակերպում են 4 ընդհանուր կարծիքներ ամբողջ խմբի համար: Այնուհետև 4 հոգանոց խմբերը միանում են և կազմում 8 հոգանոց մեծ խմբեր: Խմբերը ներկայացնում են իրենց կարծիքները, պարզում նմանություններն ու տարբերությունները, նորից կազմելով 4 ընդհանուր կարծիք ամբողջ խմբի համար: Խմբերի ձևակերպած բոլոր կարծիքները պետք է ներկայացնել դասարանին և կատարել անդրադարձ՝ տալով հետևյալ բնույթի հարցեր.

.ինչ զգացումներ ունեիք մենակ աշխատելիս,

.որն էր երկուսով աշխատելու առավելությունը,

.որ փուլում էին բոլորը հավասար և ակտիվ մասնակցում,

.որ փուլում էին ավելի հեշտ որոշումներ կայացնում,

.արդյոք բոլորը մասնակցեցին քննարկմանը 8 հոգանոց խմբով աշխատելիս: Այս մեթոդը նպաստում է, որ յուրաքանչյուր մասնակից ներգրավվի խմբի աշխատանքներում և հաշվետու լինի ստեղծելու, համեմատելու, լսելու, խոսելու:

Մտածիր-զույգ կազմիր-քննարկիր: Այս մեթոդն արագ կատարվող համատեղ աշխատանք է, որն օգնում է աշակերտներին մտածել, կշռադատել տեքստի շուրջ և ընկերների օգնությամբ հստակեցնել, ձևակերպել իրենց մտքերը: Ուսուցիչը նախօրոք թեմայի շուրջ հարցեր է պատրաստում, որոնք սովորաբար բաց բնույթ ունեն, այսինքն՝ երկակի պատասխան են ենթադրում և աշակերտներին խնդրում է կրճատ գրել այդ հարցերի պատասխանները: Այնուհետև աշակերտները զույգեր են կազմում և միմյանց հետ մտքեր փոխանակում՝ փորձելով գտնել այն պատասխանը, որն ամբողջացնում է իրենց երկուսի պատասխանները: Ապա ուսուցիչը հարցնում է զույգերից մի քանիսին, որոնք ներկայացնում են իրենց քննարկումների արդյունքները:

Վեննի դիագրամի մեթոդ: Վեննի դիագրամը կառուցվում է երկու և ավելի շրջանագծերով, որոնք հատման մակերես ունեն կենտրոնում: Այս դիագրամը կարելի է օգտագործել գաղափարները կամ կերպարները միմյանց հակադրելու կամ դրանց ընդանրությունը ցույց տալու նպատակով: Մի շրջանագծում պետք է բնութագրել մի հերոսին, մյուս շրջանագծում՝երկրորդին: Հետո համեմատել դիագրամները, այնուհետև հատվող մասում լրացնել ընդհանուր հատկանիշները:

Երկու աստղի և մեկ ցանկության մեթոդ: Տեքստն ընթերցելուց հետո կշռադատման փուլում կարելի է իրականացնել այս մեթոդը, որի շնորհիվ ստեղծագործությունը դառնում է պարզ, ուսանելի և տպավորիչ: Սովորողները նախ պետք է գրի առնեն տվյալ ստեղծագործության ամենահետաքրքիր և գլխավոր միտքն արտահայտող երկու նախադասություններ, որոնք էլ հենց դառնալու են <<2 աստղերը>>: Այնուհետև նրանք պետք է շարադրեն, թե ինչպես կուզենային, որ ավարտվեր տվյալ ստեղծագործությունը: Սա էլ կլինի իրենց ցանկությունը:

Աքրոստիքոսի մեթոդ: Այս մեթոդն ակտիվացնում է սովորողներին: Այն հնարավորություն է ընձեռնում՝ դրսևորելու անկաշկանդվածությունը, բացահայտել ունակությունները: Առաջացնում է հավատ սեփական ուժերի նկատմամբ, զարգացնում ստեղծագործական միտքը: Տվյալ մեթոդի էությունը հետևյալն է. գրել ցանկացած բառ, բառակապակցություն և հորինել բանաստեղծություն՝ յուրաքանչյուր տող սկսել այդ բառի հերթական տառերով

Հեղինակի աթոռի մեթոդ: Հնարավորություն է տալիս սեփական անձի նկատմամբ ուշադրություն գրավել: Այս մեթոդի շնորհիվ աշակերտների մեջ բացահայտվում է պատասխանատվության զգացումը: Աշակերտներն իրենց գրած շարադրությունները, հորինվածքները և բանաստեղծությունները ներկայացնում կամ պատմում են առանձին աթոռի նստած՝բոլորի աչքի առջև: Նրանք նստում են <<հեղինակի աթոռին>> և պաշտոնական հնչեղություն տալիս խոսքին: Կենտրոնում՝ ամբիոնից խոսելիս նրանց մեջ ձևավորվում է սեփական խոսքին հետևելու կարողություն, ինչպես նաև բարձրանում է սեփական ինքնարժեքը:

10 րոպեանոց շարադրության մեթոդ: 10 րոպեանոց շարադրությունն օգտագործվում է դասի վերջում, որպեսզի աշակերտներին օգնի ամփոփել ուսումնասիրվող թեմայի շուրջ իրենց մտքերը և ուսուցիչներին առավել հստակ պատկերացում տա դասի մտավոր ներգործության վերաբերյալ: Աշակերտներից պահանջվում է գրել, թե ինչ սովորեցին այս դասանյութը ուսումնասիրելիս և գրեն նաև դասանյութի վերաբերյալ մի հարց, որի պատասխանը դեռ չգիտեն: Ուսուցիչը շարադրությունները կարող է հավաքել, ուսումնասիրել և օգտագործել հաջորդ օրվա դասը պլանավորելիս:[3]

Երկխոսություն:Դեռ վաղ ժամանակներից երկխոսությունը հայտնի է որպես ուսուցման հնարք, ուսուցման գործընթացի սուբյեկտների հարաբերությունների բարենպաստ ձև: Դեպի անհատը կողմնորոշում ունեցող ուսուցման պայմաններում երկխոսությունը դիտարկվում է որպես անհատի անձի զարգացումը պայմանավորող մանկավարժական իրավիճակի համապարփակ բնութագիր: Տեսական ու գործնական խնդիրներ լուծելու գործընթացում ուսումնառողի ներգրավումն էլ հենց նշանակում է անհատի զարգացման նպատակային իրադրության ստեղծում: Եկխոսությունը հասարակ զրույց չէ, այլ՝ համատեղ «գործ», համագործակցություն: Եկխոսությունը նաև տարբեր առարկաների հետազոտությունների ժամանակ հուզական, արժեքային և իմաստաորոնողական գործունեության փորձի յուրացման յուրատեսակ տեխնոլոգիա է: Երկխոսությունն ուսուցման բարդ մեթոդ է, որն իրականացնում է դեպի անհատը

[3] Խաչատրյան Ս. Գ., Աշակերտների ինքնուրույն և ստեղծագործական աշխատանքի ձևերը մայրենիի ժամերին, « Նախաշավիղ», 1. 2003, «Տիգրան Մեծ»

կողմնորոշում ունեցող (անձնային ուղղորդված) ուսուցման նպատակների ստորակարգությամբ.

Բանավեճ: Բանավեճի նպատակներն են. ուսուցման գործընթացի ժամանակ խնդիրների լուծումը խմբային մեթոդով կամ ներգործությունը մասնակիցների կարծիքների և դիրքորոշումների վրա: Խմբային բանավեճը լուծում է հետևալ խնդիրները՝

- իրավիճակների վերլուծության ուսուցում մասնակիցների կողմից,
- պրոբլեմի ստեղծման հմտությունների ձևավորում,
- այլ մասնակիցների հետ համագործակցային ունակության զարգացում,
- տարատեսակ պրոբլեմների լուծումների բազմազանության ցուցադրում:

Խմբային բանավեճի մասնակիցները պետք է. իրար լսեն և հասկանան, իրար գնահատական չտան, չնսեմացնեն և չվիրավորվեն, լռեն ուսումնառողի ազդանշանով, ցուցաբերեն մասնակցություն և պահպանեն վարելակարգը:

Մասնակիցների խմբային աշխատանքի ժամանակ զգալիորեն մեծանում է օգնության կարիք ունեցող յուրաքանչյուրին ցույց տրվող աջակցությունը ինչպես դասավանդողի, այնպես էլ ընկերների կողմից: Ընդ որում աջակցողն ինքն, այդուհանդերձ, ոչ պակաս օգնություն է ստանում, քան թույլ մասնակիցը, քանի որ նրա գիտելիքներն արդիականացվում, որոշակիացվում են, ձեռք բերում առավել մեծ ճկունություն և ամրապնդվում հենց ընկերոջը բացատրելու ժամանակ: Գոյություն ունեն բանավեճի տարբեր տեսակներ.

T-աձև աղյուսակ: T-աձև աղյուսակն օգտագործվում է միևնույն հասկացության, խնդրի 2 կողմերը համեմատելու համար: Սա գծագրական դասակարգիչներից ամենապարզն է և կազմակերպչական ձևով և կառուցվածքով: Այն կարող է կիրառվել անհատապես կամ խմբով աշխատելիս: Իր ձևով T տառը հիշեցնող աղյուսակը կազմված է 2 բաժնից, որտեղ գրանցվում են միևնույն հասկացության, խնդրի հակադիր որակները, դրական կամ բացասական կողմերը: T-աձև

աղյուսակը ճկուն է նաև այն իմաստով, որ դրա օգտագործումը արդյունավետ է դասերի տարբեր փուլերի ընթացքում և տարբեր առարկաներ ուսումասիրելիս:

Քառաբաժան: Դասանյութի յուրացումը ստուգելու նպատակով ուսուցիչն առաջարկում է կազմել քառաբաժան՝ տետրի էջը խաչաձև բաժանելով 4 հավասար մասերի: Յուրաքանչյուր մասում ուսուցիչն առաջարկում է գրել որոշակի հարց և պատասխանել:

Աշակերտները բաժանվում են 4-5 հոգանոց խմբերի: Խմբերը պատասխանում են հարցերին, ապա յուրաքանչյուր խումբ ներկայացնում է իրենց խմբի պատասխանները:

2. ՓՈԽՆԵՐԳՈՐԾՈՒՆ ՄԵԹՈԴՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ ՏԱՐՐԱԿԱՆ ԴԱՍԱՐԱՆՆԵՐՈՒՄ

Արդի ժամանակներում կրթության արդյունավետությունը և որակը բարձրացնելու համար պետք է կիրառել ժամանակակից մեթոդներ, տեխնոլոգիաներ, որոնք կնպաստեն միջառարկայական կապերի ամրապնդմանը, ինքնուրույն ճանաչողական գործունեության շարժառիթների ապահովմանը: Այս պահանջները բավարարում է փոխներգործուն մեթոդների կիրառումը:

Ժամանակակից տեղեկատվության դարաշրջանում գիտելիքները արագ են հնանում, ուստի անհրաժեշտ են նոր մեթոդներ, ձևեր, որոնք կնպաստեն արագ զարգանալուն և ինքնակատարելագործվելուն:

Ուսուցչի նպատակն է սովորողին այնպես կրթել ու դաստիարակել, որ համապատասխանի ժամանակակից պահանջներին: Այդ պատճառով պետք է ուսումը կազմակերպել այնպես, որ յուրաքանչյուր աշակերտ զարգանա, բացահայտվի՝ դառնալով ստեղծագործ անհատ: Այս ամենը պահանջում է ցուցաբերել նոր մոտեցում, նոր մեթոդների և ձևերի որոնմանն ու կիրառմանը:

Փոխներգործուն մեթոդներով ուսուցումը կազմակերպելու ժամանակ մասնակից է դառնում ողջ դասարանը, պատրաստի գիտելիքներ ուսուցչի կողմից չի մատուցվում, որը հնարավորություն է տալիս ակտիվացնել հիշողությունը, գիտելիքները, ինչպես նաև ձեռք բերել նորանոր գիտելիքներ և հմտություններ:

Ուսուցման ճանաչողական գործընթացը ակտիվացնելու համար կիրառվում են ուսուցման ավանդական մեթոդներ՝ օգտագործելով այնպիսի հնարներ, ինչպիսիք են պրոբլեմային իրավիճակի ստեղծումը, հարցադրումը՝ ներառելով պրակտիկ վարժություններ, խնդիրներ: Այս մեթոդների կիրառումն ուղղված է առաջնային գիտելիքի ձեռքբերմանը, մտածողության զարգացմանը, հմտությունների, հետաքրքրությունների, կարողությունների ձևավորմանը, սակայն պետք է հաշվի առնել, որ անհնար է անցկացնել ուսուցում միայն փոխներգործուն մեթոդներով: Դրան զուգահեռ կիրառվում են նաև ավանդական մեթոդներ՝ պատմելը, բացատրելը:

Տարրական դասարաններում արդյունավետ է կիրառել խաղային- փոխներգործուն մեթոդը: Երեխաներին հետաքրքրում են դերային խաղերը, խաղ – մրցույթները:

Կրտսեր դպրոցականներն ունեն անկայուն ուշադրություն, բարձր շարժողական ակտիվություն, խաղային գործունեության ձգտում, հետաքրքրությունների բազմազանություն: Խմբային աշխատանքների ժամանակ լինում են աշակերտներ՝ ովքեր ունենալով ցածր գիտելիքների մակարդակ, դուրս են մնում, սակայն արտաքուստ նրանք ակտիվ են թվում: Ուստի պետք է որոշել , թե որ ձևերն ու մեթոդներն են արդյունավետ:

Տարրական դասարանների ուսուցիչներն ունեն լայն հնարավորություն ինքնակրթվելու , ստեղծագործելու, ակտիվացնելու , կատարելագործելու , սեփական գիտելիքները, կարողությունները և հմտությունները, որոնք ձևավորում են երեխաների կրթական գործունեությունը:

Մեր պրակտիկայում հանգել ենք այն գաղափարին, որ ուսումնական գործընթացի ճիշտ կազմակերպման ու իրականացման համար անհրաժեշտ են կիրառել այնպիսի մեթոդներ, որոնք ուսումնական պրոցեսը կդարձնեն ընկալելի, հետաքրքիր և դյուրին:

3. Փոխներգործուն մեթոդների կիրառման մեր փորձը

Դասի պլան

Ուսուցչի անունը՝ Շուշան Խաչատրյան

Դասարանը՝ II^{Բ}

Ամիս, ամսաթիվ՝ 06.10.2022թ.

Առարկան՝ Մայրենի

Թեման՝ «Աշուն»

Դասի տևողությունը՝ 45 րոպե

Դասի նպատակը՝

- Կզարգացնեն հասկանալով կարդալու կարողությունները,
- Կզարգացնեն բառարանից օգտվելու կարողությունները և հմտությունները,
- Կամրակայեն միավանկ և բազմավանկ բառերի մասին ունեցած գիտելիքները,
- Կամրակայեն ունեցած գիտելիքները՝ փոխներգործուն մեթոդների միջոցով:

Խնդիրները՝ **Կրթական՝**

1. Կընթերցեն, կարտասանեն, կվերարտադրեն բանաստեղծությունը,
2. Կիմանան և կամրակայեն միավանկ և բազմավանկ բառերի մասին ունեցած գիտելիքները:

- **Զարգացնող՝**

1. Կիմանան ամենայն հայոց բանաստեղծ՝ Հ. Թումանյանի մասին,
2. Կգրեն շարադրություն «Աշուն» թեմայով,
3. Կիմանան յուրաքանչյուր տարվա եղանակին բնորոշ երևույթները:

- **Դաստիարակչական՝**

1. Կկարևորեն բնության դերը մարդու կյանքում,

2. Կիմանան ինչպես խնամել, պահպանել բնությունը:

Դասի ավարտին սովորողը պետք է՝

- **Իմանա** տարվա եղանակների մասին
  տարվա ամիսների մասին
  միավանկ և բազմավանկ բառերի մասին
- **Կարողանա** կարդալ և վերարտադրել բանաստեղծությունը
  տարբերել միավանկ և բազմավանկ բառերը
- **Տիրապետի** գիտելիքների և հմտությունների, որոնք առնչվում են «Աշուն» թեմային
- **Արժևորի** բնության դերը և կարևորությունը մարդու կյանքում

Անհրաժեշտ սարքավորումներ՝ Սահիկաշար, պաստառներ, քարտեր:

Ուսուցչի օժանդակող ռեսուրսներ՝ Գրքեր, ամսագրեր, համակարգիչ:

Դասի ընթացքը՝ 1. Հին նյութի հարցում

2. Նոր նյութի հաղորդում

3. Անդրադարձ

Դասի խթանում՝ 1. Կիրառել «Գուշակություն» մեթոդը,

2. Գուշակել հանելուկներ, վերհիշել լեզվական խաղեր,

3. Վերհիշել տարվա եղանակները, ամիսները,

4. Զրույց՝ «Ինչ գիտեն աշնան մասին»:

Դասի իմաստի ընալում՝

1. Ընթերցել բանաստեղծությունը
2. Զրուցել թեմայի բովանդակության շուրջ
3. Հյուսել նկարագրական խոսք աշնան վերաբերյալ
4. Կիրառել «Տ-աձև աղյուսակ» մեթոդը
5. Աշխատել լեզվական գիտելիքների շուրջ

Դասի կշռադատում՝ 1.Կիրառել «Վարդ, փուշ, բողբոջ» մեթոդը

2. Ամփոփել դասը:

3. Կատարել անդրադարձ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ավարտելով հետազոտական աշխատանքը՝ եկել ենք հետևյալ եզրակացությունների՝

1. Ուսուցման դաս-դասարանային համակարգի պայմաններում փոխներգործուն մեթոդները շատ հեշտորեն ներդրվում են ուսումնական գործընթացում: Զուգակցվելով գործող ուսումնադաստիարակչական գործընթացին՝ ինտերակտիվ մեթոդները հնարավորություն են ընձեռում հասնել ուսումնական առարկայի կրթական նպատակներին ոչ թե ավանդական, այլ՝ այլընտրանքային մեթոդների միջոցով:
2. Փոխներգործուն մեթոդները, իրապես հանդիսանալով մարդասիրական տեխնոլոգիաներ, ապահովում են ուսումնառողների կողմից ոչ միայն ուսումնական նյութի հաջող յուրացումը, նրանց մտավոր, այլ նաև ստեղծագործական զարգացումը, ինքնուրույնությունը, ակտիվությունը և ինչ-որ նոր բան ստեղծելու ձգտումը:
3. Փոխներգործուն մեթոդներով դասավարման ժամանակ ուսումնական նյութի յուրացումը ապահովվում է ոչ միայն ընկալման, հիշողության, ուշադրության միջոցով, այլ նաև մտքի լարման, սխալ մտածելակերպի հաղթահարման, տարբեր տեսակետների համադրման և ճշմարտության որոնման ճանապարհով՝ առավելագույն չափով օգտագործելով ունկնդիրների փորձը, նպաստելով ուսումնասիրվող նյութի յուրացմանը:
4. Փոխներգործուն մեթոդների կիրառությունը ուսուցման գործընթացում ուսուցիչների աշխատանքը դարձնում է առավել դյուրին, նպաստում ուսումնական գործընթացի օպտիմալացման, արդյունավետությաքն և կատարողական կարգապահության բարձրացմանը:

ՕԳՏԱԳՈՐԾԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Խաչատրյան Ս. Գ., Ուսուցման ժամանակակից մեթոդների կիրառումը, Գյումրի, 2006:
2. Ամիրջանյան Յու. Սաֆարյան Ս.Ս. Մանկավարժություն, Երևան, 2004.-455էջ:
3. Խաչատրյան Ս. Գ., Աշակերտների ինքնուրույն և ստեղծագործական աշխատանքի ձևերը մայրենիի ժամերին (համագործակցային ուսուցում), «Նախաշավիղ », 1.2003, «Տիգրան Մեծ»: